Ինեկոբանկը քո կողքին #2

1

Ծրագրի նկարագիր

Ծրագրի նպատակն է.

Մշտապես լինել ուսանողների կողքին, աջակցել կրթության ոլորտին, փոխհատուցել ընտրված ուսանողների վարձավճարները կամ կազմակերպել ֆինանսավորվող պրակտիկա արտերկրում:

Ընտրված մասնակիցները ծրագրի ավարտին նվազագույնը մեկ տարի ժամկետով կներգրավվեն Ինեկոբանկում՝ որպես հիմնական աշխատակից, կամ նույն ժամանակահատվածով կիրականացնեն պրոյեկտային աշխատանքներ:
Հաղթողները նաև հնարավորություն կունենան մասնակցել Բանկի կողմից կազմակերպվող միջոցառումներին և ներկայանալ, որպես Բանկի ամբասադորներ :

Ինչպես մասնակցել.

- Ցանկացողները կարող են լրացնել դիմում-հայտեր
- Անցնել ինքնակենսագրականների դիտարկման փուլ
- Մասնակցել օնլայն թեստավորման

/այն դիմորդներն, ովքեր վերջին 1 տարվա ընթացքում մասնակցել են թեստավորման Ինեկոբանկում և ունեն անցողիկ միավոր, կմասնակցեն միայն անհատական հարցազրույցի/

- Մասնակցել անհատական հարցազրույցի

2

Ծրագրի նկարագիր

Ծրագրին կարող են դիմել.

- 2024-2025 ուսումնական տարում ԵՊՀ, ՀՊՏՀ, ՀՖՀՀ, ՀՌՀ, ՀԱՊՀ-ում բակալավրի ավարտական կուրս տեղափոխվող և մագիստրոսական ծրագրի ուսանողներ
- Վճարովի, անվճար կամ զեղչային համակարգում սովորող ուսանողներ
- Ուսանողներ՝ ովքեր նույն ժամանակահատվածում որպես աշխատակից ներգրավված չեն ֆինանսաբանկային համակարգում
- Նախկինում Ինեկոբանկում պրակտիկայի մասնակցած կամ այժմ մասնակցող ուսանողներ

***Հաղթողները ծրագրի ավարտից հետո ֆինանսավորվող առաջիկա 1 տարի ժամանակահատվածում՝ ֆինանսաբանկային համակարգում, որպես գործատու կարող են դիտարկել միայն Ինեկոբանկը:**
***Ծրագրին չեն կարող մասնակցել Ինեկոբանկի աշխատակից-ուսանողները, քանի որ նրանց համար Բանկում կգործեն այլ ծրագրեր:**

2023-2024 ուսումնական տարում դիմորդների առաջադիմություն.

- ԵՊՀ՝ 13 և բարձր /հնարավոր 20-ից/
- ՀՊՏՀ՝ 13 և բարձր /հնարավոր 20-ից/
- ՀՖՀՀ՝ 12 և բարձր /հնարավոր 20-ից/
- ՀՌՀ՝ 2.7 և բարձր /հնարավոր 4-ից/
- ՀԱՊՀ՝ 61 և բարձր /հնարավոր 100-ից/

3

Պրակտիկա և համագործակցություն

Ծրագրին կարող են մասնակցել.

- Դիմորդներն ովքեր կհաղթահարեն թեստավորման փուլը, և անհատական հարցազրույցի գնահատման արդյունքում կունենան հավաքական անցողիկ միավորներ.
- Նախաձեռնող են և թիմային, ունեն ինքնաներկայացման, շփման և ժամանակի կառավարման զարգացած հմտություններ
- Մրցութային փուլերը հաղթահարած ուսանողները 4 ժամյա գրաֆիկով կմասնակցեն 3 շաբաթյա պրակտիկայի Ինեկոբանկում:
- Պրակտիկայի ընթացքում իրականացված պրոյեկտները կլինեն ինովացիաների և/ կամ նոր տեխնոլոգիաների կիրառման շրջանակներում:
- Նախագծի ողջ ընթացքում ներգրավված կլինեն մենթորներ, ովքեր մասնակիցներին կուղղորդեն և կաջակցեն ծրագրի իրագործման ընթացքում:

Հաղթողների ընտրության իրականացման փուլում հաշվի կառնվեն.

- Թեստավորման և հարցազրույցի արդյուքները
- 2023-2024 ուս. տարվա ՄՈԳ-ը
- Նախագծրի իրականացման գործընթացում ներգրավվածության ու ներկայացման հմտությունների գնահատումը հանձնաժողովի կողմից

Ընտրված ուսանողների հետ կկնքվի վարձավճարի փոխհատուցման պայմանագիր և բոլոր մասնակիցները կստանան ծրագրի մասնակցության հավաստագրեր:

Ժամանակացույց

1	28/06-14/07	Ծրագրի հայտարարում և դիմում հայտերի ընդունում
2	15/07-26/07	Դիմորդների թեստավորում և հարցազրույցներ
3	05/07-23/08	Նախագծերի իրականացում
4	27/08-28/08	Հաղթող մասնակիցների ընտրություն
5	28/08-30/08	Պայմանագրի կնքում և ֆինանսավորում

NECO PEOPLE

Շնորհակալություն